Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության շրջանակներում

Վարդանյան Թամարա Ա.
հայցորդ, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն, Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0002-3442-0866
vardanyan_tomatamara@mail.ru

ՀՏԴ՝ 327.1; **EDN:** ZOCJWA
DOI: 10.58587/18292437-2026.5-19
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ տարածաշրջան, արտաքին քաղաքականություն, միջազգային հանրություն, պետություն, համագործակցություն, ներգրավվածություն, ինտեգրում, ազդեցություն

Геополитическое значение Южного Кавказа в рамках внешней политики Соединенных Штатов Америки

Варданян Тамара А.
Соискатель, Кафедра международных отношений и дипломатии, Факультет международных отношений, Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. В статье рассматриваются ключевые события во внешней политике США, ресурсы и инструменты для их реализации, а также анализируются основные направления политики США на Южном Кавказе, включая отдельные аспекты сотрудничества. Представлены научно-аналитические оценки противодействия России, Ирана и Турции на региональные инициативы США, а также реакции государств Южного Кавказа на двустороннюю и многостороннюю политику США. В этом контексте анализ политики США на Южном Кавказе представляет не только теоретический интерес, но и имеет практическое значение для исследования формировании внешней политики США, оценки баланса сил и моделирования региональной стабильности.
Ключевые слова и словосочетания: регион, внешняя политика, международное сообщество, государство, сотрудничество, взаимодействие, интеграция, влияние

The geopolitical significance of the South Caucasus in the framework of the foreign policy of the United States of America

Vardanyan Tamara A.
Postgraduate student, Chair of International Relations and Diplomacy, Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. The article examines key events in US foreign policy, resources and tools for their implementation, and also analyzes the main directions of US policy in the South Caucasus, including certain aspects of cooperation. The article presents scientific and analytical assessments of the opposition of Russia, Iran, and Turkey to US regional initiatives, as well as the reactions of the South Caucasus states to US bilateral and multilateral policies. In this context, the analysis of US policy in the South Caucasus is not only of theoretical interest, but also has practical significance for studying the formation of US foreign policy, assessing the balance of power, and modeling regional stability.
Keywords & phrases: region, foreign policy, international community, state, cooperation, interaction, integration, influence

Ներածություն

Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության ռազմավարական մոտեցումների ուսումնասիրությունը Հարավային Կովկասում ցույց է տալիս, որ տարածաշրջանը մշտապես գտնվել է ԱՄՆ-ի գլոբալ քաղաքական առաջնահերթությունների թվում՝ պայմանավորված իր աշխարհագրական դիրքով, բնական պաշարներով, հաղորդակցական միջանցքների կարևորությամբ և տարածաշրջանային անվտանգային համակարգերի կառուցման հարցում ունեցած դերակատարությամբ: Հարավային Կովկասը՝ որպես Եվրոպայի և Ասիայի միջև ռազմավարական կամուրջ, ԱՄՆ-ի համար ոչ միայն էներգետիկ և տնտեսական շահերի տարածք է, այլև գաղափարական բախման հարթակ, որտեղ մրցակցում են ժողովրդավարության և ավտորիտարիզմի տարբեր մոդելներ:

Հետազոտության նպատակն է համապարփակ մոտեցմամբ ուսումնասիրել Ամերիկայի

Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության պատմական ձևավորման փուլայնությունը, դրա իրացումը Հարավային Կովկասում՝ ընդգծելով ազդեցության բազմաշերտ բնույթը հատկապես տարածաշրջանի երեք պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականությունների վրա:

Հոդվածի համար որպես մեթոդաբանական հիմք են կազմել արտաքին քաղաքականության վերլուծության ժամանակակից տեսությունները և մեթոդաբանական մոդելները: Ներառվել են ինչպես ընդհանրական մոտեցումներ՝ ռացիոնալ ընտրության մոդել, համապարփակ քաղաքականության ուսումնասիրության մոդել, հանրային կարծիքի ազդեցության գնահատման մոդել, այնպես էլ համակցված մեթոդներ՝ ռազմավարական վերլուծություն, կոնտենտ գնահատում, պատմական, համեմատական հետազոտություն և էմպիրիկ փաստաթղթային ուսումնասիրություն:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգային զարգացումները

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը պատմականորեն ձևավորվել է մի շարք սկզբունքների և հայեցակարգերի վրա, որոնք արտացոլում են երկրի ազգային շահերը, ինչպես նաև նրա գլոբալ դերակատարությունը միջազգային ասպարեզում: ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնական նպատակն է ամրապնդել անվտանգությունը, պաշտպանել ժողովրդավարության ու մարդու իրավունքների արժեքները, ինչպես նաև երաշխավորել ազատ շուկայի և տնտեսական կայունության սկզբունքները համաշխարհային մակարդակում: Այս քաղաքականությունը, սակայն, չի սահմանափակվում միայն ԱՄՆ-ի ազգային շահերի կոնկրետացմամբ: Այն ներառում է նաև աշխարհաքաղաքական մարտահրավերների լուծմանն ուղղված միջոցառումներ, որոնք ուղղված են միջազգային անվտանգության սպառնալիքների նվազեցմանը, տնտեսական զարգացումների խթանմանը և արտաքին հարաբերությունների կայունացմանը [**14**, էջ 25]:

Ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ ներկայացված հայեցակարգերը միաժամանակ արտացոլում են ԱՄՆ-ի գերիշխանությունը և ռազմավարական շահերը, բայց նաև լուրջ մարտահրավերներ են առաջացնում՝ կապված այլ պետությունների ազդեցության, միջազգային համերաշխության և արդարության հիմնախնդիրների հետ [**6**, էջ 142]: Հետևապես, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնարար հայեցակարգերն ու սկզբունքները շարունակաբար ձևավորվել են ու փոփոխվել են աշխարհաքաղաքական դինամիկայի փոփոխությանը զուգահեռ, սակայն դրանք միշտ էլ կշռադատված են եղել ըստ դոմինանտ գաղափարների, որոնք ուղեկցվել են ԱՄՆ-ի միջազգային դիրքի փոփոխություններով:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմքերը բազմաշերտ են ու ներառում են ինչպես անցյալում որդեգրված դոկտրիններ, այնպես էլ նոր մարտահրավերներին համապատասխան փոփոխություններ: Այս հայեցակարգերի հիմքում դրված են գաղափարներ, որոնք կապված են ժողովրդավարության տարածման, մարդու իրավունքների պաշտպանության, տնտեսական մրցունակության և կայունության պահպանման, ինչպես նաև ԱՄՆ-ի գլոբալ անվտանգությունը ապահովելու սկզբունքներին: Աշխարհում տեղի ունեցող տարբեր քաղաքական գործընթացներում ԱՄՆ-ն ձգտում է հավասարակշռել իր շահերն ու գլոբալ մարտահրավերներին դիմակայելու կարողությունը [**12**, էջեր 182-183]:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի հիմքերը պայմանավորված են ինչպես երկրի հիմնական ազգային շահերի պաշտպանության, այնպես էլ աշխարհաքաղաքական մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ, ինչը տարբեր ժամանակահատվածներում խթանել է նոր հայեցակարգերի որդեգրումը՝ ելնելով ժամանակի և միջազգային հարաբերությունների մեջ գործող ուժերի դինամիկայից:

Տարբեր ժամանակաշրջաններում՝ սկսած Մոնրոյի դոկտրինայից մինչև հետսառըպատերազմի դարաշրջան, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը ձևավորվել է մեկուսացումից դեպի գլոբալ առաջնորդություն, ազգային շահերի պաշտպանությունից մինչև արժեքների լայն տարածում: Յուրաքանչյուր նախագահի օրոք այս քաղաքականությունը ձեռք է բերել յուրահատուկ գծեր՝ ազդելով միջազգային հարաբերությունների, տարածաշրջանային կայունության և ԱՄՆ-ի համաշխարհային դիրքերի վրա: Մասնավորապես, Մոնրոյի դոկտրինը ամերիկյան արտաքին քաղաքականության հիմնասյուներից է, որը 1823 թվականին հայտարարեց ԱՄՆ նախագահ Ջեյմս Մոնրոն: Այն նպատակ ուներ պաշտպանել ԱՄՆ-ի ազդեցությունը Արևմտյան «Hemisphere»-ում և սահմանափակել Եվրոպայի երկրների միջամտությունը Ամերիկայի մայրցամաքի գործերին: Մոնրոյի դոկտրինը սկզբունքորեն բաժանվում էր երկու մասի՝

1. ԱՄՆ-ն հայտարարում է, որ չի միջամտի Եվրոպայի ներքին գործերին: Դա նշանակում էր, որ ԱՄՆ-ը ձգտում էր իր բախումները համահարթեցնել Եվրոպայի հետ և չմիջամտել նրանց քաղաքական գործընթացներին:

2. Եվրոպական պետություններին արգելվում էր նոր խմբավորումներ ստեղծել Արևմտյան «Hemisphere»-ում: Այդ կերպ, Ամերիկան

պետք է յուրովի պահպաներ իր միջամտությունը այդ տարածաշրջանում՝ զսպելով Եվրոպայի ազդեցություններից:

Մոնրոյի դոկտրինն առաջին անգամ կիրառվեց Լատինական Ամերիկայի երկրների՝ ի դեմս Մեքսիկայի անկախության գրանցման ժամանակ, և նրա ձևավորումը եղավ առանցքային հաջորդող քաղաքական գործողությունների համար՝ հետագայում ամրապնդելով ամերիկյան շահերը ամբողջ մայրցամաքում [**13**]:

Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքականությունը կարելի է համարել ամերիկյան դիվանագիտության «քաղաքական հեղափոխություն», որը հիմնվում էր իրավունքի, արդարության և համաշխարհային խաղաղության առաջնահերթությունների վրա: Այդ տեսությունը ընդգծում էր միջազգային համագործակցության միջոցով կայուն համաշխարհային կարգի ստեղծումը: Վիլսոնի հայտնի մոտեցումներից էր, որ ԱՄՆ-ը պետք է ընդգրկված լինի միջազգային կառույցներում, մասնավորապես՝ Ազգերի Լիգայում, որը պետք է դառնա գլխավոր մարմին՝ միջազգային խաղաղությունը պաշտպանելու համար: Սա «փափուկ ուժի» կիրառման գաղափար էր՝ ԱՄՆ-ի ազդեցությունը դիվանագիտական ու իրավական միջոցներով տարածելով: Վիլսոնի դոկտրինը ավելի ուշ դարձավ միջազգային հարաբերությունների նոր մոդելը՝ որտեղ մեծ ուշադրություն էր դարձվում ժողովրդի ինքնորոշման իրավունքին:

Վ. Վիլսոնի մոտեցումը խրախուսում էր բազմակողմանի համագործակցություն՝ հիմնված արդարության և միջազգային օրենսդրության վրա: Դա, իհարկե, ամբողջովին չիրագործվեց, սակայն նրա գաղափարները հիմնարար ազդակ էին դառնում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համար [**17**]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1947 թվականին, ԱՄՆ նախագահ Հարրի Ս. Թրումենը հայտարարեց Թրումենի դոկտրինը, որը նպատակ ուներ կասեցնել կոմունիզմի տարածումը աշխարհի տարբեր մասերում: Դոկտրինը թույլատրեց ԱՄՆ-ին տրամադրել տնտեսական ու ռազմական աջակցություն բոլոր այն երկրներին, որոնք գտնվում էին կոմունիստական ազդեցության սպառնալիքի տակ: Թրումենի քաղաքականությունը ծնունդ տվեց «Containment» (սահմանափակում) սկզբունքին, որի հիմքը՝ Խորհրդային Միության տարածքային ընդլայնման կանխարգելումն էր: Թրումենի դոկտրինը առաջին անգամ կիրառվեց Թուրքիայում և Հունաստանում՝ աջակցություն ցուցաբերելով տեղի ժողովրդավարական կառավարություններին, ընդդեմ կոմունիստական ռեժիմների: Դա շատ ազդեցիկ ռազմավարություն դարձավ, քանի որ այն ակտիվորեն կիրառվեց ողջ աշխարհում՝ մինչև սառը պատերազմի ավարտը, երբ ԱՄՆ-ը ծավալվեց տրանսատլանտյան դաշինքներում և շահերի նոր կենտրոններում [**21**]:

ԱՄՆ-ում Դոնալդ Ռեյգանի նախագահությունը 1980-1990-ական թվականներին փաստորեն մեկուսացրեց Խորհրդային Միությանը՝ ստեղծելով տնտեսական ճնշում, ըստ «աղքատության հաղթահարման» ռազմավարության: Նախագահ Ռեյգանի քաղաքականությունը ենթադրում էր, որ Խորհրդային Միությունը չէր կարողանա տնտեսական ամբողջական բարեփոխումներ իրականացնել, ինչից հետո պետք է կտրուկ նվազեցնելով միջազգային կապերը՝ հանգեցնել ԽՍՀՄ ռազմական ու տնտեսական անկման: Այս շրջանը բնորոշվում էր նաև հետադիմության հակազդմամբ՝ պատերազմի սպառնալիքների կրճատման և դիվանագիտության նոր ձևերի ավելացման հետ: Ռեյգանի ժամանակավոր ռազմավարությունը փաստացի ուժեղացրել էր ՆԱՏՕ-ի դիրքերը, ինչպես նաև առաջ տանում էր ազատ շուկայի սկզբունքները՝ կենտրոնանալով հակասովետական քաղաքականության վրա: Այսպիսով, ԱՄՆ-ը պահպանեց իր գլոբալ հսկողությունը, իսկ ռեյգանական դիվանագիտությունը օգտագործում էր որ միայն ռազմական ուժը, այլ նաև ֆինանսական ու դիվանագիտական միջոցները [**11**, էջ 154]:

Բուշի դոկտրինը (կամ «ԱՄՆ-ի հարձակողական արտաքին քաղաքականությունը») ձևավորվեց 2001 թվականին, երբ Ջորջ Բուշը դարձավ ԱՄՆ 43-րդ նախագահ: Այս դոկտրինը հայտարարեց, որ ԱՄՆ-ը իրավունք ունի հարձակվել ցանկացած երկրի վրա, եթե այդ երկիրը ներկայացնում է ահաբեկչական սպառնալիք կամ միջուկային զենքի տարածման վտանգ: Հռչակվեց «պաշտպանողական» քաղաքականություն [**4**, էջ 118], որն ուղղված էր ոչ միայն ահաբեկիչների դեմ պայքարելուն, այլև ժողովրդավարական փոփոխությունների խթանմանը ամբողջ աշխարհում:

Նախագահ Բուշի վարչակազմը տեսնում էր ԱՄՆ-ն որպես «հոգևոր առաջնորդ», որի հիմնական նպատակն այն էր, որ երկրները, որոնք անցնում էին ժողովրդավարության ճանապարհով, պետք է աջակցություն ստանան Միացյալ Նահանգներից: Բուշը հավատում էր, որ ամերիկյան արժեքները՝ ժողովրդավարությունը, ազատ շուկաները և մարդու իրավունքները, պետք է տարածվեն գլոբալ մակարդակով: Նա տեսնում էր «ժողովրդավարական պատերազմների» գաղափարը որպես ԱՄՆ-ի ապագա ռազմավարություն՝ ուղղված գաղափարական և աշխարհաքաղաքական հաղթանակներին [8, էջ 66-67]:

Պատերազմները Աֆղանստանում (2001 թ.) և Իրաքում (2003 թ.) ԱՄՆ-ի ժողովրդավա-

րության քարոզչության այդ ժամանակաշրջանի հիմնական օրինակներ էին: Իրաքում Սադամ Հուսեյնի ռեժիմի տապալումը միջոց էր, որով Բուշը փորձում էր ժողովրդավարություն ներմուծել այդ երկիր: Սակայն, Իրաքում խորհրդարանական համակարգի բացակայությունը, անվտանգության ճգնաժամը, տնտեսական անկումը և այլ մարտահրավերները ցույց տվեցին, որ ԱՄՆ-ի ժողովրդավարացման ռազմավարությունը ոչ միշտ էր հաջողակ [**20**]: Բացի այդ, Բուշի կառավարության ռազմավարական շրջադարձի հիմնական պատճառը պետք է փնտրել Եգիպտոսի 2005 թ. երկու ընտրություններում «Մուսուլման եղբայրներ» շարժման, իսկ 2006 թ. Պաղեստինի ընտրություններում «Համաս» շարժման հաղթանակի փաստերում [**5**, էջ 169] :

Բուշի դոկտրինը խիստ քննադատության ենթարկվեց՝ հատկապես իրաքյան պատերազմի առնչությամբ, որը ոչ միայն փոխեց տարածաշրջանի աշխարհաքաղաքական դիրքերը, այլև առաջացրեց մեծ հակասություններ ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ միջազգային հարթակներում (չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ իրաքյան քաղաքականությունը զուգահեռաբար իրավաքաղաքական առումով փաստարկվում էր նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերով [**3**, էջեր 141-142]): Բուշի վարչակազմի ժառանգությունը բնորոշվում է նաև նրա միջազգային ուժի կիրառման շատ մեծ չափերով, որը ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական դիրքերի կայունացման փոխարեն հանգեցրեց հակառակ ազդեցության՝ խորացնելով թշնամանքը մի շարք երկրների հետ [**15**]:

Բարաք Օբամայի նախագահությունը, որը սկսվեց 2009 թվականին, արձագանքեց մի շարք գլոբալ մարտահրավերների և վերադասավորեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները: Օբամայի ռազմավարությունը հայտնի է «վերաբացվող դիվանագիտություն» («Engagement»), որն ուղղված էր խթանելու դիվանագիտական հարաբերությունները և ներկայացնել ԱՄՆ-ի շահերը ոչ միայն ռազմական ուժի միջոցով, այլև սոցիալական, տնտեսական և մշակութային խթանմամբ: Բ. Օբամայի արտաքին քաղաքականությունն ընդգծում էր «կառուցողական դիվանագիտությունը»՝ ներառելով բազմակողմանի համագործակցության գաղափարը: Նա ակտիվորեն գործեց միջազգային կառույցներում՝ որպես դիվանագետ, իսկ առավել խոշոր ձեռքբերումներից մեկը համարվում է Իրանի միջուկային համաձայնագիրը, որը նպատակ ուներ սահմանափակել Իրանի միջուկային ծրագիրը և ավելացնել տնտեսական պատժամիջոցները: Փաստացի, մինչ Օբամայի նախագահության շրջանը Իրանի դեմ կիրառված պատժամիջոցները զգալիորեն զիջում էին իրենց բովանդակությամբ և խստությամբ [**2**, էջ 30]: Նախագահ Օբամայի իշխանությունը նաև վերսկսեց ԱՄՆ-ի ներգրավվածությունը միջազգային կառույցներում՝ ՄԱԿ-ի, Համաշխարհային առևտրի կազմակերպություն (WTO) և այլն [**11**, էջ 144]:

Անցնելով Ասիական դարաշրջանին՝ Օբաման ընդգծեց, որ աշխարհի կենտրոնը տեղափոխվում է Ասիա և այդ պատճառով կարևոր էր ամրապնդել ԱՄՆ-ի դերը այս տարածաշրջանում՝ առճակատվելով Չինաստանի աճող ազդեցության հետ: Օբամայի վարչակազմը առանձնահատուկ կարևորություն էր տալիս «փափուկ ուժի» կիրառմանը՝ փորձելով ամրապնդել ԱՄՆ-ի միջազգային իմիջը և ազդել երկրների վրա ոչ միայն ռազմական ուժով, այլ նաև սոցիալական և մշակութային կապերով [**19**, էջ 26]:

Դոնալդ Թրամփի առաջին նախագահությունը, որը սկսվեց 2017 թվականին, արտահայտեց «Ամերիկայի քաղաքականությունը», որն ուղղված էր նախևառաջ ԱՄՆ-ի ներքին շահերի պաշտպանությանը: Այս քաղաքականությունը տարբերվող հակադրություն էր Օբամայի դիվանագիտությանը, քանի որ Թրամփը հակված էր կրճատել ԱՄՆ-ի մասնակցությունը միջազգային գործերին, իսկ արտաքին քաղաքականությունը դարձնել ավելի «միայնակ»: Թրամփի նախագահության ընթացքում ԱՄՆ-ը դուրս եկավ մի շարք միջազգային համաձայնագրերից, այդ թվում՝ Փարիզի կլիմայի համաձայնագրից, Իրանի միջուկային գործարքից և այլն [**16**, էջեր 28-29]: Թրամփը որդեգրեց տնտեսական համաշխարհային քաղաքականություն՝ կենտրոնանալով ԱՄՆ-ի տնտեսության առաջնահերթության վրա՝ օգտագործելով պատժամիջոցներ ու տարածաշրջանային հետաձգումներ: Իհարկե, Թրամփի հակառուսական ու հակչինական քաղաքականությունը նույնպես հանգեցրեց մի շարք գլոբալ հակադրությունների՝ հանուն միջազգային շուկայում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդման: Փաստացի սկսվեց նոր «առևտրային պատերազմների» փուլ Չինաստանի դեմ, որի նպատակն էր ամրապնդել ԱՄՆ-ի տեխնոլոգիական ոլորտի դիրքերը [**10**, էջեր 276-277]:

Կարելի է ընդհանրացնել, որ ԱՄՆ-ը մշտապես ակտիվ արտաքին քաղաքականություն է վարել, որոնց հիմքերը դրվել են ելնելով տվյալ ժամանակաշրջանի շահերից: Չնայած նրան, որ տարբեր նախագահների օրոք առաջ են մղվել բազմաբնույթ նպատակներ, մինչ այսօր էլ ԱՄՆ-ը պահպանում է միջազգային ու տարածաշրջանային հարթակներում իր ամուր և կայուն դերը, ինչը փաստում է, որ տարբեր տարիների հայեցակարգերը արդյունավետ են և համապատասխանել են կոնկրետ ժամակաշրջանի չափորոշիչներին:

21-րդ դարը առանձնանում է այն հանգամանքով, որ ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցան սզբունքային փոփոխություններ, որոնք հիմնականում պայմանավորված էին գլոբալիզացիայի աճով, միջազգային անվտանգության սպառնալիքների նոր տեսակի զարգացմամբ և նոր աշխարհակարգի ձևավորմամբ: Նման գլոբալ փոփոխությունները պահանջում էին նոր քաղաքականություն, նոր ռազմավարություններ և մոտեցումներ: Արդի աշխարհակարգի պայմաններում մի կողմից ԱՄՆ-ը շարունակում է պահպանել իր գլոբալ դերակատարությունը, մյուս կողմից՝ հակադրվում են Չինաստանը և Ռուսաստանը, որոնք կարող են ազդել ամերիկյան գլոբալ ռազմավարության վրա: Այդ պայմաններում ԱՄՆ-ը շարունակում է ձգտել ստեղծել գլոբալ խաղաղություն, աջակցել տարածաշրջանային կազմակերպությունների աշխատանքներին և, միաժամանակ, վերափոխել իր արտաքին քաղաքականությունը՝ ի պատասխան նոր անվտանգային սպառնալիքների, ինչպիսիք են, օրինակ՝ ահաբեկչությունը, կլիմայական փոփոխությունները և միջազգային թրաֆիքինգի ցանցերը: ԱՄՆ-ը նաև կոնկրետացրել է իր քաղաքականությունը գլոբալ տնտեսական միությունների, առևտրի ազատության և համաշխարհային առևտրի կառավարման հարցերի մասոն:

Հարավային Կովկասում ԱՄՆ-ի քաղաքականության հիմնական գործիքակազմը և ուղղությունները

Հարավային Կովկասը 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին գնահատելի է որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության կարևոր ուղղություն, որտեղ ԱՄՆ-ը կիրառել է բազմաշերտ գործիքակազմ՝ ձգտելով ապահովել իր ռազմավարական շահերը, հակակշռել տարածաշրջանային մրցակիցներին և խթանել արևմտյան ինտեգրումը: Գործիքակազմը ներառել է դիվանագիտական, տնտեսական, էներգետիկ և ռազմական բաղադրիչներ, որոնք կիրառվել են՝ հաշվի առնելով տարածաշրջանի բարդ աշխարհաքաղաքական դինամիկան:

Վերլուծելով ԱՄՆ-ի դիվանագիտական գործիքակազմը Հարավային Կովկասում՝ հարկ է նշել, որ հիմնական դիվանագիտական ջանքերից մեկը կենտրոնացած էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վրա, որտեղ ԱՄՆ-ը համանախագահում էր ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակում՝ միջնորդական դեր ստանձնելով Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցություններում: Այս դերը թույլ էր տալիս ԱՄՆ-ին ազդեցություն գործադրել տարածաշրջանային անվտանգության մասով՝ միաժամանակ կանխելով Իրանի և Ռուսաստանի միջնորդական դերերի ընդլայնումը, որոնք կարող էին ամրապնդել նրանց ազդեցությունը: Մինսկի խմբի շրջանակում ԱՄՆ-ը կենտրոնացավ հաշտեցման և խաղաղ կարգավորման խթանման վրա, սակայն բանակցություններում նրա դիրքորոշումը հաճախ սահմանափակվում էր Ռուսաստանի և Հայաստանի միջև սերտ կապերով [**7**, էջ 145]: Տարածաշրջանի մյուս շատ թե քիչ հավանական հակամարտությունների մասով մասնագետները արդարացիորեն ընդգծում են, որ Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունների ճանաչումը փաստացի սառեցրեց նաև ԱՄՆ հետաքրքրությունները դրանցում [**1**, էջ 134]:

Հայաստանի հետ դիվանագիտական աշխատանքը առանձնանում էր իր բարդությամբ: ԱՄՆ-ը զգուշավոր էր Հայաստանի հետ հարաբերություններում՝ հաշվի առնելով նրա՝ որոշակի ժամանակահատվածում ցուցաբերած ռուսամետ կողմնորոշումը և Իրանի հետ տնտեսական կապերը: Բացի այդ, հայկական սփյուռքի ազդեցությունը ԱՄՆ-ի ներքին քաղաքականության վրա ԱՄՆ-ին ստիպում էր որոշակիորեն հաշվի առնել Հայաստանի շահերը, ինչը սահմանափակում էր դիվանագիտական ճնշումը: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ը փորձում էր խթանել Հայաստանի մասնակցությունը արևմտյան ծրագրերին, օրինակ՝ Եվրոպական հարևանության քաղաքականությանը, որպեսզի նաև նվազեցնի նրա կախվածությունը Ռուսաստանից Իրանից [**9**, էջ 92]:

Երկրորդ կարևոր դիվանագիտական ուղղությունը վերաբերում էր Վրաստանի և Ադրբեջանի արևմտամետ կողմնորոշման խրախուսմանը: ԱՄՆ-ն աջակցում էր Վրաստանի ինտեգրումը ՆԱՏՕ-ի և Եվրամիության հետ, ինչը ակտիվացավ 2003 թ. Վարդերի հեղափոխությունից հետո: Այս գործընթացը նպատակ ուներ նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը, որն ուժեղ էր Վրաստանի ներքին և արտաքին քաղաքականության վրա, և խուսափել Իրանի ազդեցության ընդլայնումից: Ադրբեջանի դեպքում ԱՄՆ-ը խորացրեց երկկողմ հարաբերությունները՝ օգտագործելով նրա էներգետիկ ռեսուրսները որպես դիվանագիտական լծակ, միաժամանակ խրախուսելով նրա մերձեցումը արևմտյան կառույցներին:

Դիվանագիտական գործիքակազմի արդյունավետությունը կախված էր նաև տարածաշրջանային դերակատարների հետ համագործակցությունից: ԱՄՆ-ը կիրառում էր «երկակի մոտեցում», որը ներառում էր և՛ երկկողմ, և՛ բազմակողմ ձևաչափեր: Օրինակ, Ադրբեջանի հետ համագործակցությունը ընդլայնվեց Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների շուրջ բանակցություններում, մինչդեռ Վրաստանի հետ աշխատանքը ընդգրկում էր ՆԱՏՕ-ի գագաթնաժողովներում աջակցություն: Սակայն

դիվանագիտական ջանքերը բախվում էին մարտահրավերների՝ Ռուսաստանի ռազմավարական ներկայության և Իրանի աշխարհագրական դիրքի պատճառով:

Ամերիկայի Միացյալ Նահանգները Հարավային Կովկասում իր ռազմավարական շահերը պաշտպանելու և տարածաշրջանում կայունություն ապահովելու համար կիրառել է ռազմական և անվտանգության նպատակայնությամբ գործիքակազմ, որն ուղղված էր նաև այս առումներով Ռուսաստանի և Իրանի ազդեցության սահմանափակմանը, ինչպես նաև արևմտյան կողմնորոշման խորացմանը: Նման գործիքակազմը ներառում էր ռազմական համագործակցություն, անվտանգության աջակցություն, ռազմավարական դաշինքներ և ՆԱՏՕ-ի հետ ինտեգրում:

Այս համատեքստում ԱՄՆ-ը ակտիվորեն զարգացրել է ռազմական համագործակցությունը Ադրբեջանի հետ, օգտագործելով նրա ռազմավարական դիրքը Կասպից ծովի մոտ և էներգետիկ ռեսուրսները: Դա վերաբերում էր, օրինակ, Իսրայելի միջոցով անօդաչու թռչող սարքերի մատակարարումներին, որոնք նպատակ ունեին ամրապնդել Ադրբեջանի պաշտպանական կարողությունները Իրանի սպառնալիքների դեմ [**18**, էջ 98]: Այս համագործակցությունը ընդլայնվեց նաև ԱՄՆ-ի կողմից մատակարարվող ռազմական սարքավորումների և խորհրդատվության միջոցով, որոնք ուղղված էին Ադրբեջանի սահմանային անվտանգությանը:

Վրաստանում ռազմական և անվտանգության գործիքակազմը կենտրոնացած էր ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ընդլայնման վրա, որը ակտիվացավ 2003 թ. վարդերի հեղափոխությունից հետո: ԱՄՆ-ն աջակցեց Վրաստանի ռազմական բարեփոխումներին, ներառյալ վերապատրաստումները և ռազմական տեխնիկայի մատակարարումները, ինչը նպատակ ուներ ամրապնդել Վրաստանի անվտանգությունը Ռուսաստանի ճնշումներից և Իրանի հնարավոր ազդեցությունից:

Հայաստանի դեպքում ռազմական համագործակցությունը սահմանափակ էր՝ պայմանավորված որոշակի ռուսամետ կողմնորոշմամբ և ՀԱՊԿ անդամակցությամբ: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ն առաջարկեց սահմանափակ ռազմական օգնություն, օրինակ՝ խաղաղապահ ուժերի վերապատրաստում և Հայաստանի մասնակցություն Աֆղանստանում ՆԱՏՕ-ի առաքելություններին, որպեսզի խորացնի Հայաստանի կապերը արևմուտքի հետ: Սակայն այս ջանքերը զգալիորեն սահմանափակվում էին Ռուսաստանի ռազմական ներկայությամբ (օրինակ՝ 102-րդ ռազմաբազան Գյումրիում):

Բացի վերոնշյալից, ԱՄՆ-ը նաև ռազմավարական դաշինքներով է գործում տարածաշրջանում: Վրաստանի համար ՆԱՏՕ-ի գագաթնաժողովներում (օրինակ՝ 2008 թ. Բուխարեստի գագաթնաժողով) ԱՄՆ-ի աջակցությունը նպատակ ուներ պատրաստել երկիրը անդամակցության համար, ինչը կարող էր նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը: Ադրբեջանում ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը կենտրոնացած էր Կասպից ծովի անվտանգության վրա, որտեղ ԱՄՆ-ը աջակցում էր համատեղ զորավարժություններին և հետախուզական գործունեությանը: Հայաստանի դեպքում ՆԱՏՕ-ի ինտեգրումը ավելի զգույշ էր ընթանում՝ հաշվի առնելով անդամակցությունը ՀԱՊԿ-ին: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ը խրախուսում էր Հայաստանի մասնակցությունը «Partnership for Peace» ծրագրին, որպեսզի ընդլայնի նրա ռազմական կապերը արևմուտքի հետ՝ առանց ուղղակիորեն սրելու Ռուսաստանի հետ հարաբերությունները [**9**, էջ 93]:

Ամերիկայի Միացյալ Նահանգներն իր ազդեցությունը ամրապնդելու համար հավելյալ օգտագործել է էներգետիկ, տնտեսական և պատժամիջոցների ինտեգրված գործիքակազմ, որոնք միաձուլվել են՝ նպատակ ունենալով կառավարել տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսները, խթանել տնտեսական կախվածությունը արևմուտքից և սահմանափակել Իրանի տարածաշրջանային դերը: Այս գործիքակազմը մշակվել է՝ հաշվի առնելով Ռուսաստանի և Իրանի մրցակցությունը, ինչպես նաև Հարավային Կովկասի ռազմավարական նշանակությունը՝ որպես էներգետիկ միջանցք:

Էներգետիկ ոլորտը ԱՄՆ-ի քաղաքականության կենտրոնական բաղադրիչն էր, որն ուղղված էր Իրանը շրջանցող նախագծերի խթանմանը: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի ծրագրերը մշակվել են՝ նպատակ ունենալով ապահովել Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսների արտահանում Եվրոպա, միաժամանակ նվազեցնելով Իրանի տարանցիկ դերը: TRACECA (Եվրոպա-Կովկաս-Ասիա) տրանսպորտային միջանցքը նույնպես բացառում էր Իրանը՝ խթանելով տարածաշրջանի ինտեգրումը արևմտյան տնտեսական համակարգին:

Տնտեսական օգնությունը, մասնավորապես՝ USAID-ի ծրագրերի միջոցով, օգտագործվում էր՝ Հայաստանի կախվածությունը Իրանից նվազեցնելու համար: Իրան-Հայաստան գազատարը Հայաստանի էներգետիկ անվտանգության կարևոր մաս էր, սակայն ԱՄՆ-ը փորձում էր առաջարկել այլընտրանքային լուծումներ՝ խրախուսելով Հայաստանի մասնակցությունը Եվրոպական հարևանության քաղաքականությանը [**22**, էջ 10]: Այս ջանքերը, սակայն, սահմանա-

փակվում էին Հայաստանի աշխարհագրական մեկուսացմամբ և Ռուսաստանի տնտեսական ազդեցությամբ:

Ադրբեջանում և Վրաստանում տնտեսական համագործակցությունը կենտրոնացած էր էներգետիկ ենթակառուցվածքների զարգացման վրա, ինչը թույլ էր տալիս ԱՄՆ-ին ամրապնդել իր դիրքերը՝ օգտագործելով այդ երկրների էներգակիրները որպես դիվանագիտական և տնտեսական լծակ: Այս գործիքակազմը նպատակ ուներ նաև արևմտյան ներդրումների միջոցով խթանել տարածաշրջանային կայունությունը:

Հարավկովկասյան տարածաշրջանում ԱՄՆ-ը կիրառել է նաև պատժամիջոցներ՝ սահմանափակելու Իրանի տնտեսական և էներգետիկ ազդեցությունը: 2000-ականներին սահմանված պատժամիջոցները խոչընդոտում էին Հայաստանի և Իրանի միջև էներգետիկ համագործակցության ընդլայնումը, օրինակ՝ Իրան-Հայաստան գազատարի հետագա զարգացման համար: Այս գործիքը նպատակ ուներ ճնշում գործադրել տարածաշրջանային գործընկերների վրա՝ սահմանափակելու Իրանի հետ գործարքները, ինչը հատկապես ակնառու էր Ադրբեջանի դեպքում, որտեղ ԱՄՆ-ը խրախուսում էր Իրանից անկախ էներգետիկ ծրագրեր:

Պատժամիջոցները նաև ուղղված էին Իրանի միջուկային ծրագրի դեմ, որն ԱՄՆ-ի համար անվտանգության մտահոգություն էր Հարավային Կովկասում: Այս ճնշումը ստիպում էր Հայաստանին և Ադրբեջանին վերանայել իրենց տնտեսական կապերը Իրանի հետ, սակայն դա բարդացնում էր ԱՄՆ-Հայաստան հարաբերությունները՝ Հայաստանի էներգետիկ կարիքների և Իրանի հետ սահմանակից դիրքի պատճառով [7, էջ 112]: Վրաստանի դեպքում պատժամիջոցների ազդեցությունը պակաս էր՝ պայմանավորված նրա սահմանափակ տնտեսական կապերով Իրանի հետ:

Էներգետիկ, տնտեսական և պատժամիջոցների գործիքակազմերը փոխլրացնում էին միմյանց: Խողովակաշարային նախագծերը (BTC, BTE) և TRACECA-ն ոչ միայն խթանում էին տնտեսական կապերը արևմուտքի հետ, այլև սպասարկում էին ԱՄՆ-ի ռազմավարությունը՝ Իրանը մեկուսացնելու համար: Այս ինտեգրացիան թույլ էր տալիս ԱՄՆ-ին խթանել Ադրբեջանի և Վրաստանի տնտեսական աճը՝ միաժամանակ սահմանափակելով Իրանի տարածաշրջանային դերակատարությունը: Սակայն Հայաստանի դեպքում այս մոտեցումը պակաս արդյունավետ էր՝ պայմանավորված նրա աշխարհագրական մեկուսացմամբ և Իրանի հետ կենսական կապերով:

Բացի նշվածներից, Ամերիկայի Միացյալ Նահանգները իր ազդեցությունը ընդլայնելու համար ակտիվորեն օգտագործել է մշակութային և հասարակական գործիքակազմ: Այն հիմնված էր ժողովրդավարական արժեքների, կրթության, մշակութային փոխանակումների և հասարակական կարծիքի ձևավորման վրա, որոնք ուղղված էին ամրապնդել արևմտյան կողմնորոշումը և կանխել Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի մշակութային-կրոնական ազդեցությունը: Այս գործիքակազմը կիրառվել է՝ հաշվի առնելով տարածաշրջանի բազմազան մշակութային և կրոնական դինամիկան:

ԱՄՆ-ը խթանել է մշակութային փոխանակումներ՝ օգտագործելով Ֆուլբրայթի (Fulbright) և ՄակԱրթուրի (MacArthur) կրթական ծրագրերը, որոնք թույլ են տվել տարածաշրջանի երիտասարդներին և պրոֆեսիոնալներին սովորել ԱՄՆ-ում և ծանոթանալ արևմտյան արժեքներին:

ԱՄՆ-ը կիրառել է փափուկ ազդեցության միջոցներ՝ խթանելու ժողովրդավարական արժեքներն ու մարդու իրավունքները: Ադրբեջանում ԱՄՆ-ը աջակցում էր կառավարությանը՝ կանխելու Իրանի շիա կրոնական ազդեցությունը, որը կարող էր խթանել անջատողական տրամադրություններ 20-30 միլիոնանոց ադրբեջանական բնակչության շրջանում: Վրաստանում փափուկ գործիքարանը արտահայտվեց ժողովրդավարական ինստիտուտների և ընտրական գործընթացների աջակցության միջոցով:

Հայաստանում, սակայն, այս գործիքակազմը ավելի զգուշավոր էր կիրառվում: ԱՄՆ-ը կենտրոնացավ քաղաքացիական հասարակության զարգացման վրա՝ ֆինանսավորելով ոչ կառավարական կազմակերպություններ և մեդիա նախաձեռնություններ, սակայն դրանց ազդեցությունը սահմանափակ էր հայկական սփյուռքի և Ռուսաստանի մշակութային ներկայության պատճառով: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ը ֆինանսավորեց մշակութային և կրթական բազմաթիվ ծրագրեր՝ միտված հայ երիտասարդության շրջանում արևմտյան կողմնորոշման խթանմանը:

Որպես ամփոփում հարկ է փաստել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության մոտեցումները Հարավային Կովկասում 1980-ականների վերջից մինչև 2020-ականների սկիզբը արտացոլում են համալիր ջանքեր՝ ուղղված արևմտյան ազդեցության ամրապնդմանը, Ռուսաստանի և Իրանի գեոպոլիտիկ դերակատարության կրճատմանը, էներգետիկ անվտանգության ապահովմանը և տարածաշրջանային կայունության խթանմանը: Այս մոտեցումները ձևավորվել են՝ հաշվի առնելով Հարավային Կովկասի բազմաշերտ աշխարհաքաղաքական դինամիկան, էներգետիկ ներուժը և մշակութային բազմազանությունը, սակայն դրանց կիրառումը բախվել է խորքային

մարտահրավերների, որոնք պայմանավորված են տարածաշրջանի ռազմավարական դերակատարների՝ Ռուսաստանի և Իրանի ազդեցիկ ներկայությամբ, ինչպես նաև տեղական պետությունների ներքին և արտաքին կապերով:

Եզրակացություն

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ռազմավարությունները թե՛ պատմական, թե՛ ժամանակակից համատեքստում ապացուցում են, որ Միացյալ Նահանգները կարողացել է պաշտպանել իր շահերն ու ազդեցությունը գլոբալ մակարդակով: Անշուշտ, այս քաղաքականության փոփոխությունն ու էվոլյուցիան պայմանավորված են ոչ միայն արտաքին մարտահրավերներով, այլ նաև երկրի ներսում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխություններով: 21-րդ դարում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը պետք է շարունակի նոր մարտահրավերներին արձագանքելու համար՝ պահպանելով իր դիրքը որպես գլոբալ առաջնորդ, միաժամանակ վերահսկելով նորագույն սպառնալիքները, ինչպիսիք են՝ կիբերհարձակումները, ահաբեկչությունը և աշխարհաքաղաքական նոր վտանգները:

Հաշվի առնելով Ռուսաստանի ռազմավարական ռեսուրսների սահմանափակումները, Ուկրաինայի պատերազմի հետևանքով առաջացած նոր ճգնաժամերը, 2026 թվականի իրանա-իսրայելական հակամարտությունը՝ կարելի է կանխատեսել, որ ԱՄՆ-ի համար լայնաբնույթ հնարավորություն է ստեղծվում ամրապնդելու իր դիրքերը Հարավային Կովկասում՝ հատկապես Հայաստանի և Վրաստանի հետ հարաբերությունների խորացման միջոցով: Վրաստանի եվրատլանտյան ձգտումները, Հայաստանի քաղաքական կուրսի վերաասիմանումը և Ադրբեջանի էներգետիկ ներուժը կարող են հանդիսանալ այն հենակետերը, որոնց վրա ԱՄՆ-ը կկառուցի իր նոր տարածաշրջանային քաղաքականությունը: Միևնույն ժամանակ, Չինաստանի աճող տնտեսական ներգրավվածությունը տարածաշրջանում, ինչպես նաև Թուրքիայի ակտիվացումը կարող են ստեղծել լրացուցիչ բարդություններ, որոնք ԱՄՆ-ը ստիպված կլինի հաշվի առնել իր արտաքին քաղաքականության հաշվարկներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Բալասանյան Գ.,** ԱՄՆ-ը, ԵՄ-ն և ՌԴ-ն Հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման գործընթացում // ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2015թ. գիտական նստաշրջանի նյութեր, Հասարակական գիտություններ՝ իրավագիտություն և քաղաքագիտություն 1.4 (14), ԵՊՀ, 2016
2. **Իսկանդարյան Գ.,** ԱՄՆ-Իրան քաղաքականության շրջափոխումը 2009-2018 թթ. // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2018 № 2 (26)
3. **Հայրապետյան Ա.,** ԱՄՆ-ի հետսառըպատերազմյան շրջանի մերձավորարևելյան քաղաքականության իրավապայմանագրային հիմքերի շուրջ // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, «Գիտական աշխատություններ», Աշխարհաքաղաքականություն, հատոր 23 (2), 2020
4. **Պետրոսյան Վ.,** Ջորջ Բուշ Կրտսեր (Արտաքին քաղաքականության մի քանի հղանցքների մասին) // Պատմություն և գիտություն, Գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 1-2, 2005
5. **Փուրշամսյան Ս.,** Ջորջ Բուշ Կրտսերի Կառավարության ռազմավարական շրջադարձը Միջին Արևելքի ժողովրդավարացման գործընթացում (2001-2008 թթ.) // Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, հատոր 4, 2011
6. **Bzezinski Z.,** The Drand Chessboard, American Primacy and Its Geostrategic Imperatives, 1997
7. **Cornell E. Sevante,** Small Nations and Great Powers: A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus, 2005
8. **Daalder H. I., Lindsay M. J.,** America Unbound: The Bush Revolution in Foreign Policy, Brookings Institution Press, 2003
9. **Herzig E.,** The New Caucasus: Armenia, Azerbaijan and Georgia. Pinter, 1999
10. **Irwin D.,** Clashing over Commerce: A History of US Trade Policy, 2017
11. **Joseph S. Nye Jr.,** Soft Power: The Means to Success in World Politics, PUB LI CAFF AIRS, New York, 2004
12. **Mead W.,** Special Providence: American Foreign Policy and How It Change the World, 2001
13. **Monroe Doctrine** (The text of U.S. Pres. James Monroe's 1823 annual message to Congress, which outlined the Monroe Doctrine), Britannica Reports, July 12, 2026, https://www.britannica.com/event/Monroe-Doctrine, Accessed on 08.08.2026
14. **Morgenthau J. Hans,** POLITICS AMONG NATIONS, THE STRUGGLE FOR POWERAND PEACE, New York, THE UNIVERSITY OF CHICAGO, 1949
15. Our Biggest Errors in Afghanistan and What We Should Learn from Them, Council On Foreign Relations, June 22, 2023, https://www.cfr.org/article/our-biggest-errors-afghanistan-and-what-we-should-learn-them, Accessed on 05.08.2026
16. **Patrick S.,** The Sovereignty Wars: Reconcilling America Wit The World, 2019
17. President Woodrow Wilson's 14 Points, **January 8,** 1918, Milestone Documents, https://www.archives.gov/milestone-documents/president-woodrow-wilsons-14-points, Accessed on 08.08.2026
18. **Shaffer B.,** Borders and Brethren: Iran and the Challenge of Azerbaijani Identity (BCSIA Studies in International Security), 2002

19. **Shambaugh D.,** China Goes Global: The Partial Power. Oxford University Press, 2013
20. **Simpson J.,** Assessing America's 'Imperial Adventure' In Iraq, BBC, 31 August, 2010, https://www.bbc.com/news/world-middle-east-11135500, Accessed on 10.08.2026
21. **The Truman Doctrine,** March 12, 1947, The Historian of the U.S. Department of State, https://history.state.gov/milestones/1945-1952/truman-doctrine, Accessed on 10.08.2026
22. **Zarifian J.,** U.S. Foreign Policy in the 1990s and 2000s, and the Case of the South Caucasus (Armenia, Azerbaijan, Georgia) // European journal of American studies, 10-2, 2005

Сдана / Հանձնվել է՝ 02.09.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 09.09.2026
Принята / Ընդունվել է՝ 16.09.2026